Հաշվետվություն

Անունը, Ազգանունը

Հովհաննես Ազիզյան

Զբաղեցրած պաշտոնը

Փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի խորհրդական

Գործուղման վայրը և ժամկետները

Բրյուսել, Բելգիայի Թագավորություն, 2018թ. հունիսի 20-ից 22-ը

Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն ՀՀ-ԵՄ Գործընկերության խորհրդի առաջին նիստին

Հանդիպումները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Օրակարգում էին՝

ՀՀ-ԵՄ հարաբերությունները, ներառյալ՝ Արևելյան գործընկերությունը և Եվրոպական հարևանության քաղաքականությունը, արտաքին և պաշտպանական քաղաքականություններում ԵՄ նոր գլոբալ ռազմավարությունը, ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրացման ուղղությամբ ձեռնարկվելիք հաջորդ քայլերը, ՀՀ-ԵՄ Գործընկերության առաջնայնությունները և առևտրա-տնտեսական ու ոլորտային համագործակցությունը (լիագումար նիստ),

Քաղաքական հարցեր, ներառյալ՝ քաղաքական երկխոսություն, բարեփոխումներ, ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, մարդու իրավունքներ և տարածաշրջանային հարցեր:

Կողմերը հատուկ շեշտեցին, որ սա առաջին հանդիպումն է Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի միջանկյալ կիրարկումից հետո՝ ընդգծելով, որ Գործընկերության խորհուրդը հնարավորություն է ընձեռում ամփոփելու ընդհանուր օրակարգի իրագործման ներկա մակարդակը և

նախանշելու համագործակցության հետագա խորացման հեռանկարները: Կողմերը վերահաստատեցին համաձայնագրի նշանակությունը՝ որպես հարաբերությունների իրավական հիմքի, որը գործնականում ընդգրկում է բոլոր կենսական ոլորտները և համագործակցության շրջանակները:

Երկուստեք ընդգծվեց համաձայնագրի կարևորությունը Հայաստանում բարեփոխումների և զարգացման օրակարգի խթանման, ինչպես նաև ԵՄ անդամ պետությունների հետ համագործակցության խորացման գործում:

Հանդիպմանը մտքեր փոխանակվեցին Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության օրակարգի հարցերի շուրջ: Կողմերը վերահաստատեցին իրենց հանձնառությունն առավել ամրապնդելու և ընդլայնելու համապարփակ փոխգործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում:

Հայաստան-Եվրամիություն գործընկերության խորհրդի առաջին նիստի արդյունքներով ընդունվեց մամուլի համատեղ հայտարարություն:

<u>Ելույթներ</u>

Լիագումար նիստի ընթացքում հանդես եմ եկել համառոտ ելույթով, որի ընթացքում ներկայացրել եմ ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման ընթացքը, մասնավորապես, որ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գլխավորությամբ ձևավորվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ և սկսվել են ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքները: Ներկայացրել եմ նաև ԵՄ հետ իրականացվող ծրագրերի և նախագծվող ծրագրերի քննարկումների ընթացքը, ինչպես նաև ապագա համատեղ ծրագրերի հնարավոր ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ:

<u>Գործուղվողը</u>

Հովհաննես Ազիզյան

<u>Ամսաթիվը</u>

03.08.2018